

ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Ր Ի Բ Ա Ս Ե Ա Ն Ա Ի Ա Ն Դ Ո Ւ Թ Ե Ա Ն

ՐՍ Մ. ԽՈՐԵՆԱՑԻՈՑ

(Տես Հտ. ԽԱ. էջ 54 — 308, ԽԲ. 35 — 315):

ԳԼՈՒԽ ԺԲ

Բեզդիմախօսարիւնք հսկատակախրաց և պատասխանի նոցին. — Հաւատիք Հայոց նախապատմական ժամանակի ինքնապարտքերն. — Կոր տեսարիւն մը 'ի նպատու Մ. Խորենացոյ. — Թագաւորք Ասորեստանեայց և Մարաց. — Հայք նպատակք Ասորեստանեայց. — Պատմական և բանասիրական սպացոյցք:

Դեռնիք թէ ստուգիւ հայ ազգն ժամանակ մը ունեցեր է իւր սեփական զինուորութիւնն, թագաւորաց և իշխանաց անընդհատ և կամ ընդհատեալ յաշորդութիւնն, սակայն ինչպէս կարելի է հաստատել զայն: Ուսկից գիտնանք թէ ոչք և ինչ դարերու շրջանաց մէջ եղած են այն թագաւորներն, երբ Մարիբասէն և Մ. Խորենացիէն զուրս ոչ ոք յանուանէ կը յիշէ զանոնք, մանաւանդ քանի որ Մարիբասայ ստուգութեան վրայ նորանոր տարակոյմներ կ'եղլնն:

Ըստ հայ Հերոդոտոսին, իբր թէ Արիւգենոս ևս յիշած ըլլար, բայց վերջէն անյայտացած էին: Գարձեալ համարինք թէ իրօք յիշած ըլլային այդ հեղինակներն, սակայն կը մնայ դարձեալ այս դժուարութիւնն, թէ ինչպէս այն հայկազունի անուանքն առանց աղաւաղութեան մնային մինչև հինգերորդ դար, և Խորենացին կարաց անոնց բուն անուանքը գտնել: Բաց աստի՛ որոշ ժամանակագրութիւն ևս կը պակսի, զոր իբրև մի միայն արիւղենեան թել ունեւրով 'ի ձեռին, կարելի էր հասնիլ և անվախ դեգերիլ այն անյիշատակ ժամանակի պատմա-

կան հորիզոններուն վրայ: Ահաւասիկ այսպիսի և ասոնց նման աւելի արտաքին երևութիւ քան թէ իրական դժուարութիւնք. յորոց ոմանք արդէն իսկ, ըստ մեզ, իրենց բանաւոր լուծումը ստացան նախընթաց գլխոց մէջ: Այլ այս և այս օրինակ դժուարութեան առջև՝ միթէ լռութեան դատապարտելու է այն հնագոյն ազգին և աշխարհի պատմութիւնը, հանդերձ իւր յիշատակարանօք և ժողովրդական երգերով: Ոչ բնաւ. ստողի և զգուշաւոր քննութիւնն ասոր դէմ կը բողոքէ: Տեսնենք ուրեմն թէ անձնական են թարգմանութեան աւելի՛ քաղցեական, երգիպտական և արիական ազգաց աւանդութիւնքն մեզի ինչ ճամբայ կը ցուցնեն:

Նախնաբար մարիբասեան պատմութեան և Հայաստանի թագաւորաց ազգաբանութեան վրայ խօսած ժամանակինս՝ ըսինք թէ առ Եւսեբիոսի (Քրոն. Ա. մասն. էջ 40) և Բազմավէպ Աղեքսանդրի՛ Բերոսոսի մատենէն առնելով՝ 86 թագաւորներ կը թուէ Բաբելոնացի՛ յետ Յրհեղեղի կամ աշտարակայնութեան մինչև ցկործանումն նորա 'ի Մարաց: Երկր դարձեալ միւս երեսին մէջ՝ Շամիրամէն մինչև ցնախորդն Մենքերիմայ ցփուղաս՝ 45 թագաւորներ կը համիէ Ասորեստանեայց, իսկ Բազդէացոց 49, և Մարաց 19, որոնց 9ը բանաւոր կը կոչէ և ոչ թէ թագաւոր:

Սակայն մենք այժմ Բաբելացոց և Բազդէացոց բազմութիւ թագաւորներէն 36ը միայն յանուանէ կը գտնենք

հոն, իսկ 'ի թագաւորաց Մարաց ինն միայն:

Իսկ Բերոսոսի յիշած այս երեք պետուլթեանց թագաւորներն 'ի միասին գումարելով՝ են 199. Իսկ ըսած ճշդագոյն ժամանակագրութեան Պոսիւէի, Կուարսոնի և Փէլիքսի 81 թագաւորաց անուանքն միայն մեզի հասած են ժամանակագիրներէն, և ծանօթ են, իսկ մնացած 118 թագաւորաց վերայ խորհրդական քօղ մը դեռ պատած է:

Արդ հիմայ կը հարցընենք ընդդիմախօսաց. ինչ է այդ խորհրդաւոր քօղըն, և անոր ներքև ծածկուած թագաւորաց և բռնաւոր ըսուած իշխողաց անուանքն և պատմութիւնն, և թէ ներելի է արդեպ պարզել այդ քօղը: Ի՞նչ պատճառաւ բռնաւոր կոչուեցան անոնցմէ ոմանք 'ի հին պատմագրաց, որոնք են անոնք բռնաւորական գործերն, որոշափ ստուգութիւն ունին, մինչև ցերթ կը պահուէին, և թէ այժմ ո՞ր կարելի է գտնել զանոնք:

Այս հարցերուս դիւրին և անստոյգ պատասխանը՝ ամենահամառօտ է. — Այլ և այլ անծանօթ անուանք էին, որք կամ կորսուած ըլլալով և կամ ուրիշ բանաւոր պատճառաւ մը անհետացան: Սակայն դժուարինն և ստոյգը՝ ծանր և երկար առարկութեանց և քննադատութեան պէտք է ենթարկել, որոնց մին է այս ըստ իմ կարծեաց. այսինքն թէ մարիբասեան պատմութեան մէջ յիշատակուած հայկազունի զիւցազունքն եղած են հաւանօրէն. որոց անուանքն և արարուածք՝ սերտիւ միացած են Ասորեստանեայց և Մարաց այն ժամանակի պատմութեան և պատերազմաց հետ, զորս կը պարունակեն այն ազգաց և արմենական կոչուած սեպաձև զրուլթիւնքն, և որոց վրայ կը զարձընենք 'ի մասնաւորի մեր հնախուզաց և բանասիրաց ուշագրութիւնը:

Այս ենթագրութիւնս ըստ ինքեան թերևս անհասկնալի երևի ոմանց, գուցէ և զուրկ 'ի պատմական հիմանէ. մանաւանդ անոնց՝ որոնք որ մեր ազ-

գային աւանդութեանց և պատմութեան և այն դրացի ազգաց հետ ունեցած սերտ յարաբերութեանցը լաւ հմուտ չեն: Սակայն եթէ մանրամասն քննելու ըլլանք Հայաստանի այդ ժամանակամիջոցի պատմութիւնն և անցքերը, այն ատեն կը տեսնենք իրք թէ այդ ենթագրութիւնն՝ պատմական և կատարեալ հաստատութիւն մը կ'առնու:

Եւ յիշալի, տոհմային պատմագրութիւնն կը ցուցընէ մեզի՝ թէ առ կարծեցեալն Շամիրամաւ, (անստոյգ ժամանակէ 'ի վեր, կամ ժը դար նախքան զԲիբլոսոս), և յԱնուշաւանայ՝ Արա դեղեցկին յաջորդէն սկսեալ՝ Հայք հարկատու նահանգ եղան ժամանակ ժամանակ Ասորեստանեայց հօր պետութեան. որոնք յետոյ Սարկոնի ատեն յետ տիրելոյ Եգիպտոսի, Պաղեստինու և Ասորուց և Ելամացոց, արչաւեցին ևս 'ի Հայս, և մասնաւոր կերպով Արարատեան կամ Արարդի թագաւորութեան վրայ, որ ըստ արձանագրութեանց Ասորեստանեայց՝ այն ժամանակի ամենէն ծաղկած և բարգաւաճ ժողովուրդն էր Հայաստանի բաժանեալ նախարարութեանց մէջ: Հոյկազունեաց սուալին հարստութիւնն, որ ըստ իս յաղթովն Արամաւ սկսաւ, շատ երկայն չաւեց, այլ Ասորեստանեայց լծոյն տակը նուաճեցաւ: Բայց այն հայկեան իշխանները, որոց զանուանս և իրս ընծայէ մեզ Խորենացի մինչև ցՍկայորդի, անընդհատ ապրուտամրութեան փորձեր ըրին իրենց հայրենեաց անկախութիւնը վերստին ձեռք բերելու. և այս պատճառաւ իբրև անանուր բռնաւորներ յիշին 'ի պատմութեան ցրմն 600, յորում վերջին անգամ մ'ալ Հայք կամ Արարատայ ժողովուրդն ապստամբելով վարբակէս Մարի թեղազրութեամբ և ձեռնտուութեամբ՝ ահաւոր հարուած մը տուին, և կործանեցին զԱսորեստանեայց պետութիւնն, և կազմեցաւ Մարաց միապետութեան հետ նաև հայկազունեաց անկախ թագաւորութիւն մը:

թէպէտ և ոչ զլիտովին ազատ անոր զօրաւոր ազգեցեցութենէն : Այնուհետև կ'ընդհատին հնոյն Հայաստանի վերաբերութիւնքն Ասորեստանեայց հետ, և Մարաց հետ կը սկսին . և մենք զանոնք ևս պէտք ենք քննել :

Ուրեմն եթէ այս իշխանաց կամ թագաւորաց թիւն ևս վերածելու ըլլանք Ասորեստանեայց վերոյիշեալ թուին, զորս Մար Իբաս անոնց մատենէն հանեց, այն ժամանակ կերպով մը թէ Ասորեստանեայց թագաւորաց պակասը կը լքցուի, և թէ Մարիբասեան երկասիրութեան մէջ հայկազունի թագաւորաց ազգաբանութիւնն՝ իւրք հաստատութիւն առած կ'ըլլայ՝ նոյն իսկ ըստ արտաքին պատմագրութեան, և թէ Եւսեբիոսի Մարաց ինն բռնաւորաց վրայ յիշատակեալ պատմութիւնն և մթութիւնն կը լուսաւորուի . վասն զի Պարոյրիւ կանգնեալ հայկազունի երկրորդ հարստութիւնն՝ զարական միջոց անցնելէն վերջը, գուցէ և Պարոյրի մահուամբը, սկսաւ կրել Մարաց հզօր ազգիցութիւնն . և յետ ոչ բազում ժամանակաց անոնց միապետութեան իբրև հարկատու նահանգ եղաւ . բայց քաջազարմ իշխանք հայկազունիք՝ այս ժամանակամիջոցին ևս անպակաս ազատութեան և քաջութեան փորձեր ըրին, գաղբեցընելով զհարկ և զհպատակութիւն, սրպէս և Քսենոփոն կը վկայէ երուանդայ համար : Ուստի այս պատճառաւ կոչին նոքա ՚ի Յոյն պատմագրաց՝ բռնաւորք Մարաց :

Արդարև, ինչ կը նշանակէ նաև խորենացոյն՝ Հայկական անխորհուրդ ապրատամբութիւնն, Զարմայրի երթն ՚ի պատերազմ՝ Տրոյիոյ, Սենեքերիմայ որդւոց գալն ՚ի Հոյս առ Սկայորդով և Բագրատունեաց առ Հրաչէի, իբր միջանկեալ դէպքեր յիշեն, առնելով ինչպէս ինքը կը վկայէ ա ՚ի բանից արանց իմաստնոց և քաջախոհակաց յ, բաց ՚ի Մարիբասոյ : Մարիբաս պատմագիրն յետ յիշելոյ (Ս. Ի. ԳԷ.) Արա. յետան Արայի մահը՝ համառօտ խօսելով անոր որդւոյն Անուշաւանայ վրայ,

մէկէն Պարոյրի պատմութեանը կը փութայ, լուսութեամբ անցնելով 100 տարուան միջոց մը :

Դարձեալ ինչ կը նշանակէ խորենացոյ 1000 տարուան միջոցի մէջ եղած այս 29 իշխանաց պարզ անուանց յիշատակութեամբ, Պարոյրին անցնելուն պէս՝ այնպիսի անսովոր և հայրենասիրական յառաջարանով մը այս բացատրութիւնները ընեն, թէ խօսինք հիմայ մեր քննիկ, արիւնատու և հարսզաւ թագաւորաց վրայ :

Ինչ կը նշանակեն նմանապէս Յովհան կաթուղիկոսի (ԳԷ. Բ.) այս խօսքերն, թէ « ՚ի զարմից Անուշաւանայ ոչ տիրեալ գտանէին հայրենի և անապետոքեանցն, այլ թէ այլք քանսցեալք ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջադիմութեան տիրեալ թորգոմեան գրոհի, որոց անուանքն են Պարետ, Արբակ . . . և Սկայորդի . յետ ամենեցուն սոցա Պարոյր անուն յազգէ Հայկոյ, զանազգիսն ՚ի բաց լքեալ և զնահապետութիւն ազգի իւրոյ վերստին նորոգեալ պայազատէր » :

Ինչ կ'ուզէ արդեօք այսու ծանուցանել մեզի այս հեղինակն : Թերևս ըսել կ'ուզէ թէ այն 29 իշխաններն ալ հայազգի չէին :

Ոչ, այս չենք կարծեր . Յովհան կաթուղիկոս առանց Հայաստանի մէջ եղած ուրիշ կենդանի աւանդութեան մը՝ չէր համարձակեր հակառակ մարիբասեան պատմութեան այսպիսի նոր կարծիք մը մէջ բերել . իսկ եթէ իրօք կայ այսպիսի աւանդութիւն մը, նախ ինքը լուսութեամբ պիտի չանցնէր, ըսա ինքեան և ոչ իսկ Մ. խորենացի և կամ ուրիշ պատմիչ մը :

Ուրեմն ինչ ալ համարելու ըլլանք, սակայն միտ այն երկու պատմագիրքն ևս կ'ուզեն ըսել, թէ Հայաստան և Հայք՝ շատ ժամանակ ինքնավարութիւն չունեցան, այլ Ասորեստանեայց կողմանէ դրուած այն Հայ իշխանաց ձեռքով կը կառավարուէին, որոնք կամ օտար աչքով նայելով թերևս իրեանց համազգեսց վրայ՝ անտիրելի և օտար

համարուեցան, և կամ նոյն իսկ կրնանք ըսել՝ թէ ոմանք ազգաւ օտար ըլլալով պարզ Հոյաստանի կուսակալութեան վարչութեանը պատճառաւ՝ Հայոց իշխաններ գրուեցան 'ի Հայոց' Ասորեստանեայց տարեգրութեանց մէջ. և կամ ընդ հակառակն զանազան ժամանակի մէջ զօրաւոր գտնուելով՝ բռնակալել ջանացեր են քաղզէական և մարական ժողովրդոց վրայ:

Իրօք Անգղիացի բանասէրք՝ Թակզադ — փաղասար Ան վերջը Ասորեստանեայց հարատուութեանը մէջ մէկ և կէս դարու անջրպետութիւն մի կը տեսնէին արդէն, մինչև ցԱսուր — Մազուր, օտար թագաւորաց միջամտութեամբն ընդհատեալ: Բայց Պ. Օբէրդ և այլք ստուգեցին թէ այն օտար թագաւորաց մին էր Բելիտարաս կամ Բելիտուրիս, արքունական պարտիզաց վերակացուն, որ ըստ վկայութեան հին պատմագրաց, դաւաճանութիւն գործելով իւր ինքնակալին դէմ՝ թագաւորեց և նոր հարատուութեան մը հիմը ձգեց: Իսկ որովհետև ըստ վկայութեան մի և նոյն բանասիրայ՝ Բելիտուրիսն Արարատայ նախնի թագաւորի մը անուն է, որուն մանրամասն պատմութիւնն և պատերազմները կ'ընթեռնուն այսօր բանասէրք 'ի բւեռագիրս, յայտնի է՝ թէ նոյն Բելիտուրիսն է:

Իսկ գալով հայկազունի իշխանաց պատմութեան և ժամանակին՝ կ'ըսենք. Անուշաւանայ իբրև պատմական ստոյգ ապացոյց՝ Սօս անունն է, որ կրօնական արարողութենէ մը յառաջ եկած էր աւանդութեամբ, և Անուշաւանայ՝ Արմաւրի սօսիներուն նուիրուած ըլլալը կը ցուցնէր, զոր կը յիշատակեն նոյն իսկ Հռովմայեցիք՝ արմենական կամ հայկական սօսի (Platanum armenicum) յորջորջմամբ:

Վահագնի պատմութեանը վկայ էր՝

1 Վերջի տարիներս Նինուէի աւերակաց մէջ գտան Անգղիացիք Սաղմանասար քի պաշտօնին 12 պնձեայ սիւնքը խորքանգակ, յորս կը տեսնուին այլ և այլ պարտեալ ժողովուրդներ, և 'ի միջի նոցա ըստ վկայութեան բանասիրի ու-

հայ ժողովրդեան բերանով երգուած երկնէր երկին և երկիր երգն. և Շարայի գոյութեանը՝ այն ռամկական հնաւանդ առածը, « թէ քո Շարայի որկորն է՝ մեր Շիրակայ ամբարքն չեն»: Դարձեալ, ինչպէս անյիշատակ ժամանակէ 'ի վեր՝ կը պահուէին Շամիրամայ վրայ յօրինած առասպելներն, որոնք ստոյգ ապացոյց են հնոյն Հայաստանի՝ Ասորեստանեայց հետ սերտ յարաբերութիւն ունենալուն, և կրօնական և պատմական աւանդութեանց՝ զորս երգէին Հայք, և կը յիշէ խորենացին, (Ս. Գլ. ԺԸ). այսինքն են, անոր հետեակ փախուստը և պաւքուսը, — զիպս ջրոյն և զարբուսն. — 'ի մտուէ հասանելի առներաւորաց, — գյուղացւորն 'ի Տոլ, և քան 'ի նմակէ, և ուրունք Շամիրասուի՝ այ Տոլ:

Այսպէս ուրեմն նաև այն վերը յիշուած իշխանաց եթէ ոչ մանրամասն պատմութիւնն, այլ գէթ անոնց կարեւոր մատուցն և Ասորեստանեայց հետ ունեցած պատերազմներն և անուանքն կը պահուէին անշուշտ այս ինչ կամ այն ինչ տեղերու և յիշատակարանաց վրայ: Արդարև այս ժամանակներս հեազհեաէ նոր յիշատակարաններ՝ կը յայտնուին և պատմական լոյսեր կը ծագեն հնոյն Հայաստանի պատմութեանը վրայ:

Արդ ինչպէս յԱնուշաւանայ մինչև ցՊարոյր (600) Հայք մերթ ընդ մերթ Ասորեստանեայց հարկատու եղան և նիգակակից, այսպէս ալ 600 կամ 610 էն մինչև ցՏիգրան Մեծն, ցամն 535, հարկատու և կամ նիգակակից համարելու ենք զՀայս Մարաց և անոնց ազդեցութեամբը վարուած:

Իրացընէ, որչափ որ առանձին աղգէին Հայք, բայց պէտք էին քաղաքակաւութեան մասին և այն ժամանակի փոփոխութեանց համեմատ՝ յարիլ զը-

րունն, երևին Հայք իրենց սեփական զէնքերով և տարազուք: Այժմ՝ Բրիտանական Թանգարաւ նին մէջ են, և անոնց լուսանկարքն հանուած կը վաճառուին 'ի Լոնարա:

րացի ազգերէն մէկուն: Ուստի թէ պէտ է ՚ի սկզբան Ասորեստանցոց հետ շատ վերաբերութիւն ունեցան, սակայն միշտ սխերիմ թշնամի էին մէկ մէկու ցեղով և կրօնիք:

Այլ ընդ հակառակն յարեւելից կողմանէ կը միացընէր անոնց հետ զԱրիւս կամ զԶանդիկ ազգը, նախ՝ անոնց աշխարհադրական դիրքը. վասն զի Երասխայ և Կուր գետոց կողմերը, յորս մեծապէս ծաղկեցաւ Հայոց ազգն, բոլորովին Մարաց աշխարհին մէջ մտած էին. ուստի պէտք էր՝ որ անհրաժեշտ սերտ յարաբերութիւն ունենար վաճառականութեան և այլ մտաւոր յեղափոխութեանց, ևս և կրօնական արարողութեանց մասին: Ո՛ր թողունք անոնց գունդագունդ գաղմկականութիւններն, որ Հայաստանի մակերևութին վրայ տարածուեցան:

Այսպէս նաև դղեակներու, քաղաքաց անուանց՝ կերտ, շատ, րանդ, ապարտ և առան վերջաւորութիւնքն կը վկայեն այն երկու ազգաց մերձաւորութեանը, որք բոլորովին Արեաց լեզուէ կը ծագին, և ուշադրութեան արժանի են: Մի և նոյն կերպարանքն ունին բուն նախնական կողմանք Հայաստանի, զոր ունէր Մարաց աշխարհն: Մարաստանն ալ ունի Կուր գետ մը, ինչպէս Բակտրացոց աշխարհն Երասխ կամ Ոքսոս գետը:

Այսպէս սերտ հաղորդակցութեան նշան է նաև լեզուին սոքգականութիւնն: Իրաւցընէ, եթէ ուզենք պատշաճ դասաւորութեան մը և բունի վերածել Հայ լեզուն կամ ճանշնալ զայն, պէտք ենք զանդիկ կամ պահլաիկ լեզուին քով դնել, որոց անուանց շատերը և արմատական բառերն հասարակ են Տայերենի:

Նոյնը կրնայ իմաստասիրել իւրաքանչիւր զք՝ նոյն իսկ ՚ի կրօնից և ՚ի կարծեաց զաստուածութենէ: Այնպէս զի անհիմն չէ բնաւ կարծել թէ Հայք ՚ի սկզբան առանց պաշտաման դից և բազմաստուածութեան եղած ըլլան, ըստ Զրադաշտական վարդապետու-

թեան. և յետոյ Ասորեստանեայց, որպէս և Արշակունեաց ժամանակ՝ ՚ի Յունաց և յԱսորոց մտած են անոնց մէջ օտարամուտ դից անուանք:

Խորհնացի (Ա. Գլ. Ի) զԱնուշաւան Սասնուէր կ'անուանէ, ըսելով. « քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ՚ի սօսիսն Արամանեկայ յԱրմաւիր, զորոց սաղարթուցն սօսաւիւն, ըստ հանգարտ և կամ սաստիկ շնչելոյ օգոյն ևեթ ուստ շարժումն, սովորեցան ՚ի հմայս աշխարհիս Հայկազանց. և այս ՚ի բազում ժամանակս »: Այս եղրակացուցիչ փաստ մի է արդարև թէ մեր ամենահին նահապետաց Արամանեկայ և Անուշաւանայ, և այլոց կրօնքն ևս ՚ի սկզբան շատ ժամանակ՝ Մարաց կամ Արիւսկան ազգաց նման՝ բնութեան կրօնք և պաշտամունք եղած է արդարև. զոր յետոյ յութեորդ դարուն նախ քան զԳրիստոս, Զրադաշտ դեռ աւելի բարձրացընելով յաւիտենական, աներելոյթ, անժամանակ աստուածութեան մը վերածեց, և կոչեց զայն Զրուան և կամ Սուրամադդա:

Նաև Հերոդոտոսի՝ Արեաց կամ Զանդիկ ազգին վրայ խօսելով ըսելը, թէ « Պարսիկք ոչ պատկերոց դից, ոչ մեհեանս և ոչ բազինս ունին և յիմարութիւն իսկ դիրսն վարկանին », Զրադաշտի վարդապետութիւնը կ'ապացուցանէ:

Այս ամէն բանէն աւելի՝ մեր հին աշխարհի քաղաքային տիուր և պայծառագոյն բաղդը գրեթէ բոլոր յընթացս պատմութեան՝ անոնց բաղդին զոյգ ընթացած կը տեսնենք: Հայք Մարաց և Պարսից հետ եղան նահանգ Ասորեստանեայց պետութեան. անոնց հետ կործանեցին Ասորեստանեայց պետութիւնն և քակեցին Բարեկական — Բաղդէական թագաւորութիւնը: Մարաց և Պարսից հետ ընկան Մակեդոնական խիստ՝ բայց կարծօրեայ լծոյն տակ, գրեթէ մի և նոյն ժամանակ և անոնց հետ ապստամբելով եղան երկու թագաւորութիւնք՝ ընդ միով Պարթև — Արշակունի հարստութեամբ:

Դարձեալ, ինչ որ էր Արեաց քաղաքային կարգաւորութիւնն ըստ զինուորութեան և ազնուական կարգի, նոյնն էր և 'ի Հայոց աշխարհին, յորում 'ի նպէս ըսուեցաւ՝ բոլոր աշխարհն նախաբարութեանց բաժնուած էր:

Արեմն է. և Զ. դարերէն սկսեալ Հայոց ամենայն բանի մէջ՝ ակն յայտնի կերպով նկատելով Զանդիկ ազգին ամենամեծ ազդեցութեան բնադրոյմբ, պէտք ենք ըսել, որ թէպէտ և երբեմն երբեմն ազատ ինքնավարութիւն ևս ունեցած ըլլան Հայք, սակայն աւելի անոնց հարկատու և նիզակակից էին քան թէ հրամայող:

Աւելի կ'ըսեմ, վասն զի անկարելի է կարծել թէ Հայք միշտ հպատակ և հաւատարիմ մնացած ըլլան Արեաց, ինչպէս շինացին Ատրեստանեայց: Այլ ժամանակ ժամանակ փորձեր փորձեցին դարձնելով անոնց վրայ իրենց պէնքերն և բռնութիւնը, փոփոխակի Պարոյրին յաջորդող այս ութ Հայկազունի թագաւորները, Հրաչեայ, Փառնուսա, Պաճոյճ, Կոռնակ, Փառոս, Միւս Հայկակ, Երուանդ սակաւակեայ և Տիգրան, և եթէ աւելցնելու ևս ըլլանք անոր եղբայրը Շաւարշ, զոր կը յիշէ քսենոփոն, այն ժամանակ ճիշդ կը լեցընեն Բերոսոսի ըսած Մարաց ինն բռնաւորներուն պակասը, որոյ պատճառը սակաւ մի առաջ յիշեցինք, որ և ուրիշ բան չէր՝ բայց եթէ վասն զի ջա.

նացին միշտ ինքնիշխան և ազատ թագաւորել իրենց հայրենի հողին վրայ, զոր Մարք իրենց տէրութեան նահանգ մը կամ սեփական ժառանգութիւն կը համարէին. կամ երկայն ժամանակ պայազատելով Հայաստանի թագաւորական գահուն, և կամ ամուսնական իրաւամբ, զոր Տակիտոս իսկ (Կար. Բ. ԾԶ. էջ 96) լաւ կը բացատրէ այս համառօտ խօսքերով, թէ « նմանութեամբ բարոյից մերձաւորագոյնք են (Հայք) ընդ Պարթեաց և ամուսնութեամբ գութ անկեալ և զաւակ խառնեալ »:

Սակայն Մարաց տէրութիւնն ևս խաղաց իւր զօրաւոր դերը շրջակայ ազգաց վերայ, և խոնարհեցաւ յանկումն. և Դանիելեան տեսութեան երրորդ գազանն՝ սկսաւ մռնչել և կիւրոսի ձեռքով նուաճեց Աժդահակեանց բռնակալութիւնը: Մարապարսիկ միապետութեան հետ ձեռք ձեռքի տուած՝ ելաւ կանգնեցաւ հուսկ ուրեմն Հայկազունեաց վերջին հարստութիւնն՝ քային Տիգրանայ թագիւ պսակեալ. որ երկու դար ու կէս տևեց, բայց ոչ միշտ նովին զօրութեամբ, այլ իբր հարկատու:

Հ. ԲԱՐՍԵՆ ԱՐԿԻՍԵԱՆ

Կը շարունակուի:

